ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

400

19 օգոստոսի 2025 թվականի N - Ա

«ՎԵՐԻՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ՝ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 17-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի աշխատակազմի 2025 թվականի օգոստոսի 13-ի N 02/09.18/26529-2025 և ՀՀ առողջապահության նախարարության 2025 թվականի օգոստոսի 18-ի N ՎԳ/05/26962-2025 գրությունները.

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հաստատել՝ «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 19
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2025 թվականի օգոստոսի 19-ի
N 400 որոշման

ԿԱՋՄ

«Վերիշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի՝ տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի.

1. Նարե Ղազարյան – Սյունիքի մարզպետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

2. Գայանե Սարգսյան - Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար),

3. Արմեն Թադևոսյան – Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ,

4. Տաթևիկ Ստեփանյան - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ (համաձայնությամբ),

5. Նորա Փահլևանյան - Առողջապահության նախարարության բժշկական օգնության քաղաքականության վարչության արտահիվանդանոցային բժշկական օգնության քաղաքականության բաժնի պետ (համաձայնությամբ),

6. Լենա Մալինցյան - ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Սյունիք» մասնաճյուղի տնօրենի պարտականությունները կատարող (համաձայնությամբ),

7. Արտակ Գրիգորյան - Հայկական հոգեբուժական ասոցիացիայի անդամ (համաձայնությամբ:

Recoverable Signature

X

Signed by: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան